ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Democracy
Development
Foundation

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱՊԱՀ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶՈՐԱԿՈՉԻ, ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

ՎԱՆԱՁՈՐ 2023

Հեղինակային խումբ՝ Նազելի Մովսեսյան
Հայկ Հակոբյան
Անի Չատինյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով ամրագրված զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացման շրջնակներում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) կարևորելով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը, իրականացնում է զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկում, տրամադրում է իրավական աջակցություն զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկներին, զինծառայողներին, կուրսանտներին, պահեստազորում հաշվառված անձանց, սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին, զորացրված և վաղաժամ զորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողներին, սպաներին, այդ թվում՝ զինծառայությունից արձակված, անհայտ կորած և զոհված զինծառայողների հարազատներին, ռազմագերիներին եւ նրանց ընտանիքի անդամներին։

Միաժամանակ, նպատակ ունենալով նպաստել զինված ուժերում բարեփոխումների արդյունավետ իրականացման գործընթացին՝ Կազմակերպությունը զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և համակարգային տարբեր խնդիրների վերլուծության արդյունքում հանդես է գալիս ոլորտին վերաբերող օրենսդրական փոփոխություններին ուղղված առաջարկություններով։

Բացի այդ, նշենք, որ Կազմակերպությունը ՀՀ զինված ուժերի բարեփոխումներին և դրա շրջանակներում իրականացվող գործողություններին անդրադարձել է 2021[1] և 2022[2]

[1] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf
[2] https://hcav.am/wp-content/uploads/2022/07/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-2-1.pdf

թվականներին՝ գնահատելով ՀՀ կառավարության 2021 - 2026 թթ. հնգամյա ծրագրով[3] նախատեսված առաջնահերթությունների կատարումը և նախատեսում է 2023 թ. ևս անդրադառնալ բարեփոխումների ուղղությամբ կատարված գործողություններին:

2022 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը փորձագետների ներգրավմամբ նախաձեռնեց զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Հայեցակարգի մշակման աշխատանքներ: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվեցին «Զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ կանաչ թուղթ» աշխատությամբ[4]:

Կազմակերպության ավելի քան 15 տարվա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդու իրավունքները խախտվում են սկսած զորակոչի փուլից: Ըստ այդմ, անհրաժեշտ է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները ձևավորել հենց այդ փուլում, կանխելու համար զորակոչիկների իրավունքների խախտումների դեպքերը, նաև նպաստել արդյունավետ իրավական մեխանիզմների ձևավորմանը՝ զորակոչիկների խախտված իրավունքները վերականգնելու նպատակով:

Զինված ուժերում մարդու իրավունքների չափանիշները համակողմանի և ամբողջական ներկայացված են 1994 թ. ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքագծի կանոններ»-ում, որի 27-րդ կետի համաձայն՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրն ապահովում է, որ իր ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայող անձնակազմի հավաքագրումն ու զորակոչը համահունչ լինեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում իր կողմից ստանձնած պարտավորություններին:

Վարքագծի կանոններում որպես հիմնարար սկզբունք է սահմանված զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը, որպես կայունության և անվտանգության անբաժանելի մաս և ժողովրդավարության կարևոր արտահայտություններց մեկը:

[3] https://www.gov.am/files/docs/4586.pdf
[4] https://hcav.am/wp-content/uploads/2022/06/Green-paper-arm.pdf

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի համաձայն՝ զինված ուժերը կառույց է, որը պատասխանատու է պետության և հասարակության պաշտպանության համար: Հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքները և ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները:

ՄԱՍ 1

ՀՀ ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԶՈՐԱԿՈՉԻ, ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ստորև ներկայացվում են զորակոչի, վարժական հավաքների ընթացքում, զորահավաքային զորակոչից հետո ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների, բուժհաստատությունների, ՀՀ պաշտպանության նախարարության վարքագծի վերաբերյալ տեղեկությունները, որոնք ստացվել են Կազմակերպությանը դիմած քաղաքացիներից:

Հարկ է նշել, որ Կազմակերպության կողմից վերը թվարկված խմբերի ներկայացուցիչների իրավունքների վիճակի համակարգված մշտադիտարկումն ու իրավական պաշտպանությունն իրականացվում է 2010 թ-ից սկսած:

2010-2019 թթ. Կազմակերպություն դիմած զորակոչիկների խնդիրները ներկայացվել են «ՀՀ պետական մարմինների վարքագիծը զորակոչի գործընթացում» զեկույցում:[5]

2020-2021 թթ. (հուլիս) ժամանակահատվածում Կազմակերպություն դիմած վերոնշյալ զորակոչիկների, վաղաժամ զորացրված զինծառայողների իրավունքների վիճակը ներկայացվել են «Զորակոչի ընթացքում, ինչպես նաև զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերով, զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման և վաղաժամ զորացրված զինծառայողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի հետ կապված գործերով ՀՀ իրավասու

[5] https://drive.google.com/file/d/1lzCYtY_tg1pZPG6mfGUq5HnyCaAdIE2q/view

պետական մարմինների վարքագիծը՝ ըստ մարդու իրավունքների սկզբունքների հանդեպ հարգանքի»[6] տեղեկանքում:

2021 թ. (օգոստոս) - 2023թ. (հունվար) ժամանակահատվածում իրավական աջակցություն ստանալու նպատակով Կազմակերպություն է դիմել 269 քաղաքացի, որից

- Զորակոչիկ՝ 70,
- Պահեստազորում հաշվառված անձ՝ 69,
- Պարտադիր ժամկետային զինծառայող՝ 42,
- Վաղաժամ զորացրված պարտադիր ժամկետային զինծառայող՝ 17,
- Անհայտ կորած զինծառայողի հարազատ՝ 15,
- Զորացրված պարտադիր ժամկետային զինծառայող՝ 11,
- Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացի՝ 9,
- Զինվորական հաշվառման ենթակա անձ՝ 9,
- Գերությունից վերադարձած անձ՝ 6,
- Զինվորական ծառայությունից արձակված սպա՝ 4,
- Պայմանագրային զինծառայող՝ 3,
- Սպա՝ 3,
- Ռազմագերու հարազատ՝ 4,
- Զոհված զինծառայողի հարազատ՝ 2,
- Զինվորական ծառայությունից վաղաժամ արձակված սպա՝ 1,
- Պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացի՝ 1,
- Վաղաժամ զորացրված պայմանագրային զինծառայող՝ 1,
- Զորացրված պայմանագրային զինծառայող՝ 1,
- Քաղաքացիական ծառայող՝ 1:

[6] https://hcav.am/wp-content/uploads/2021/10/%D5%BA%D5%A5%D5%BF-%D5%B4%D5%A1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D5%BE%D5%A1%D6%80%D6%84%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE_%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%80%D5%94%D4%B1%D5%8E.pdf

Խնդիրները, որոնց առնչվել են Կազմակերպություն դիմած անջինք, հիմնականում կապված են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (նայսւոհետ նաև՝ ԶԶՀԾ) և տարածքային ստոաբաժանումների կողմից քաղաքացիների ծանուցման կարգի և ժամկետների, վերջիններիս առողջական վիճակի հետազոտման, կայացված բժշկական եզրակացությունների, պիտանիության վերաբերյալ եզրակացությունների տրամադրման, տարածքային ստորաբաժանումների, բժշկական հաստատությունների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացման, քաղաքացիների նկատմամբ վերջիններիս աշխատակիցների վերաբերմունքի և այլ խնդիրների հետ:

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և տարածքային ստորաբաժանումների վերաբերմունքը զորակոչիկների, զորացրված զինծառայողների, պահեստազորում հաշվառված և գերությունից վերադարձած անձանց նկատմամբ

Զորակոչի գործընթացում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներն ունեն առանցքային դեր՝ զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկներին, վարժական հավաքների կանչվող պահեստազորում հաշվառված անձանց իրազեկելու հարցում: Այնուամենայնիվ, տարածքային ստորաբաժանումները պատշաճ կերպով չեն իրականացնում իրենց վերապահված գործառույթները:

Ներկայացնենք խնդիրները, որոնց պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների կանչվելու ընթացքում, ինչպես նաև զորահավաքային զորակոչի շրջանակներում մարտական գործողությունների մասնակցած քաղաքացիները և գերությունից վերադարձած զինծառայողները առնչվել են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում:

- Բժշկական հետազոտությունների համար զորակոչիկներին **տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը բավարար չէ**

մարզերից Երևան մեկնելու համար, ինչը լրացուցիչ բեռ է հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար: Նշված խնդրի մասին Կազմակերպությունը բարձրաձայնում է տարիներ շարունակ, դեռևս 2013 թվականից[7], սակայն մինչ այժմ խնդիրը մնում է չլուծված:

- Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների աշխատակիցները շարունակում են արհեստական խոչընդոտներ ստեղծել զորակոչիկներին **իրենց առողջական վիճակի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը տրամադրելու հարցում՝ տրամադրելով միայն դրանց մի մասը:** Առողջական խնդիրներով Կազմակերպություն դիմած անձանց շուրջ 80%-ն առնչվել է նշված խնդրին:
- Քաղաքացիների ծանուցումը չի իրականացվում պատշաճ կարգով, չնայած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է «զինկոմիսարիատ» (ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանում) ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փոխարենը՝ ծանուցման թերթիկը հանձնում են կամ տանը գտնվող այլ անձանց, կամ ծանուցում են զանգի միջոցով, երբեմն՝ ոչ անմիջապես զորակոչիկին կամ վարժական հավաքների ենթակա անձին:

Ծանուցման խնդիրն արձանագրվել է նաև 2021 և 2022 թվականներին հայտարարված վարժական հավաքների շրջանակներում պահեստազորում հաշվառված անձանց ներգրավելու ընթացքում, երբ ծանուցումը քաղաքացիներին տրամադրվում էր նույն օրը զորակոչվելու համար, չնայած այն հանգամանքին, որ «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող

[7] http://archive.hcav.am/wp-content/uploads/2014/11/%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013-2014_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

միջոցառումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշմամբ սահմանվում է, որ «Այն պահեստազորայինները, որոնք ընտրվել են որպես վարժական **հավաքներում պատրաստվելու թեկնածուներ, ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ՝** զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով»: Նշենք նաև, որ 2023 թ-ից հայտարարվող վարժական հավաքներին կանչվող պահեստազորայիններին ծանուցելիս պահպանվում են ծանուցման ժամկետները, սակայն ծանուցման կարգի հետ կապված խնդիրները դեռևս առկա են, քանի որ վերջիններս ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումներ ներկայանալու մասին ծանուցվում են հեռախոսազանգով:

- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում **բացակայում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների կողմից իրենց առողջության վիճակի վերաբերյալ նախկինում ներկայացված փաստաթղթերը:** Այս խնդիրը հաճախակի է արձանագրվում, որը հիմք է տալիս պնդելու, որ պահեստազորում հաշվառված անաձնց անձնական գործերը պատշաճ չեն վարում:
- 2023 թ. կայանալիք վարժական հավաքների մասնակցելու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ են կանչվում պահեստազորում հաշվառված անձինք, ովքեր մասնակցել և արձակվել են **եռամսյա** վարժական հավաքներից 2022 թվականին, այսինքն՝ երկու կամ երեք ամիս առաջ, մինչդեռ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «...պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել ... ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում»:***
- Անհասկանալի են նաև դեռևս չհայտարարված վարժական հավաքներին քաղաքացիներին ներգրավելուն ուղղված գործողությունները: Մասնավորապես՝ 2023 թ. փետրվար ամսին քաղաքացիներին ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային

համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում հայտնել են 2023 թ. հուլիսին կայանալիք վարժական հավաքներին մասնակցելու նրանց պարտավորության մասին, **այն դեպքում երբ այդ ժամանակահատվածի համար վարժական հավաքներ պաշտոնապես հայտարարված չեն:** Այսինքն՝ քաղաքացիները տեղեկացված չեն վարժական հավաքների յուրաքանչյուր փուլի անցկացման ժամանակացույցի մասին, չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2022 թ. հոկտեմբերին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարել էր, որ 2023 թ-ից նախատեսվող վարժական հավանքներին քաղաքացին ինքն է ընտրելու՝ երբ մասնակցի հավաքներին: Արձանագրելով, որ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում քաղաքացիներին գործնականում տրամադրվում է վարժական հավաքներին մասնակցելու ժամկետի ընտրության հնարավորություն, այնուամենայնիվ սույն կարգավորումը ամրագրված չէ օրենքով:

- Հաճախակի հանդիպող խնդիրներից է նաև Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից անձանց զինվորական **գրքույկները վերցնելու և առանց հիմնավոր պատճառի տևական ժամանակ հետ չվերադարձնելու պրակտիկան:**
- 44-օրյա պատերազմական գործողություններին մասնակցած անձին **մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու համար վերջինիս վրա է դրվում փաստաթղթերի ներկայացման պարտականությունը** այն պատճառով, որ զորամասը, որին կցագրվել կամ որի կազմում մարտական գործողությունների է մասնակցել անձը, պատերազմի ավարտից հետո լուծարվել է կամ անցել է ադրբեջանական վերահսկողության ներքո: Արդյունքում շատ հաճախ անհնար է լինում հավաքագրել անհրաժեշտ տեղեկություններն այդ մասին: Միակ տարբերակն այս դեպքում տվյալ անձի հետ մարտական գործողություններին մասնակցած անձանց վկայություններն են, որոնք, սակայն, հիմք չեն հանդիսանում կարգավիճակ տրամադրելու համար: Այս առումով Կազմակերպությունն առաջարկել է ընդունել

համապատասխան օրենսդրական ակտ, որի միջոցով հնարավոր կլինի լուծել 44-օրյա պատերազմին մասնակցած անձանց մարտական գործողություններին մասնակցի կարգավիճակ տրամադրելու հարցը՝ բացառելով անձի վրա փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն դնելու ցանկացած պահանջ:

- 44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ են դեպքերը, երբ **մարտական գործողություններին մասնակիցների զինվորական գրքույկներում** ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և տարածքային ստորաբաժանումների **կողմից չեն կատարվում համապատասխան նշումներ այդ մասին**, ինչը հանգեցնում է խոչընդոտների՝ արտոնություններից օգտվելու հարցում: Ի դեպ, մարտական գործողությունների մասնակիցներին պետության կողմից տրամադրվող արտոնություններին Կազմակերպությունն անդրադարձել է 2022 թվականին[8]: Նշենք, որ նման մոտեցում կար նաև 2016 թ քառօրյա պատերազմից հետո: Սույն խնդրով 2016 թ-ից Կազմակերպություն է դիմել 21 հոգի: Կազմակերպության կողմից ՀՀ ՊՆ գրություններ ուղարկելուց հետո միայն, մարտական գործողություններին մասնակցած 7 զինծառայողների զինգրքույկներում կատարվել են համապատասխան գրառումները: 2 զինծառայողների զինգրքույկներում գրառումները կատարելու պահանջով Կազմակերպության կողմից դատարան ներկայացված հայցադիմումները մերժվել են: Մյուս քաղաքացիները չեն ցանկացել գրավոր կարգով իրավական աջակցություն ստանալ տվյալ հարցի վերաբերյալ:
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքում խնդիրներից մեկը նաև **գերությունից վերադարձած զինծառայողների վերաբերյալ փաստաթղթերի՝ այդ թվում՝ զինվորական գրքույկների տրամադրման ժամկետների հարցն է**: Կազմակերպություն դիմած գերությունից վերաձարձած զինծառայողներից 3-ն առնչվել են նշված խնդրի հետ, մասնավորապես՝ 2022 թ. սեպտեմբերի երկօրյա

[8] https://hcav.am/military-07-06-2022/

մարտերին գերեվարվելուց և ապա՝ 2022 թ. հոկտեմբերին հայրենադարձվելուց հետո զինծառայողները վաղաժամ զորացրվեցին զինվորական ծառայությունից: ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները վերջիններիս զինվորական գրքույկները տրամադրել են 2023 թ. ապրիլին՝ զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրվելուց շուրջ 6 ամիս անց: Նշենք, որ զինծառայողներին իրենց զինվորական գրքույկների տրամադրման պահանջով Կազմակերպությունը 2023 թ. հունվարին և մարտին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն և միայն ապրիլին զինծառայողներին տրամադրվեցին իրենց զինվորական գրքույկները:

2. ՀՀ զինվորական կոմիսարիատների /զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության/ բժշկական հանձնաժողովների վարքագիծը զորակոչի և վարժական հավաքների ընթացքում

ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման համաձայն՝ զինվորական կոմիսարիատի /զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության/ բժշկական հանձնաժողովի գործառույթներն են՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի զինապարտներին զինվորական հաշվառման, զորակոչի, զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի (ռազմական ուսումնական հաստատությունների) թեկնածուների ընտրության ժամանակ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձանց փորձաքննության ենթարկելը.

2) պահեստազորում հաշվառվող զինապարտներին զինվորական հաշվառման վերցնելիս, իսկ պահեստազորում հաշվառվածներին՝ օրենքով սահմանված դեպքերում վերափորձաքննություն անցնելու, պայմանագրային զինվորական ծառայության

ներգրավելիս, զորահավաքային զորակոչի կամ պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելու ժամանակ փորձաքննության ենթարկելը.

3) նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման անհրաժեշտության վերաբերյալ զինվորական կոմիսարին եզրակացություն ներկայացնելը.

4) զինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելը.

5) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց կանխարգելիչ պատվաստումների ամբողջականության և լիարժեքության գնահատումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Պատվաստումների ազգային օրացույցի համաձայն.

6) փորձաքննությունների արդյունքներն ամփոփելը և դրա մասին զինվորական կոմիսարին ներկայացնելը:

Արձանագրվել են հետևյալ խնդիրները ՀՀ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովների կողմից իրենց գործառույթների կատարման ժամանակ.

- Բժշկական հետազոտություն անցնելու համար հանձնաժողովների **կողմից զորակոչիկներին հատկացված ուղեգրերում երբեմն առկա են տեխնիկական թերություններ (թերի գրառումներ), որոնց պատճառով բուժհաստատությունները զորակոչիկներին չեն ենթարկում բժշկական հետազոտությունների և վերջիններս ստիպված են լինում վերադառնալ տարածքային ստորաբաժանում, նորից ուղեգիր ստանալ և կրկին գնալ Երևան,** ինչը հավելյալ ֆինանսական խնդիրներ է առաջացնում զորակոչիկների համար:
- **Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները** և պիտանիության մասին որոշում կայացնելիս հանձնաժողովները հիմնվում են առկա այլ, ավելի թեթև արտահայտված առողջական խնդիրների վրա, որոնցով կայացված որոշումը չի համապատասխանում զորակոչիկի առողջական վիճակին:

- ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման 59-րդ հոդվածի համաձայն՝ «ԶԿԲՀ-ների («զինվորական կոմիսարիատների» բժշկական հանձնաժողովների) կողմից ախտորոշված հիվանդության առկայության դեպքում զորակոչային տարիքի անձանց հետագա՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային կամ ամբուլատոր բուժումն իրականացվում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից»: Խնդիրն այն է, որ պետության կողմից տրամադրվող **անվճար բուժօգնության շրջանակներում երբեմն առաջարկվում է առավել անարդյունավետ անվճար բուժում**:
- ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 36-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքերում, երբ բժիշկները դժվարանում են վերջնական ախտորոշել զորակոչիկի առողջական վիճակը, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համապատասխան տարածքային զինվորական կոմիսարը նրան հետազոտման է ուղեգրում բուժհաստատություն: Ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը: Մինչդեռ, որոշ դեպքերում **զորակոչիկներն ուղղորդվում են այն բուժհաստատություններ, որտեղ ըստ զորակոչիկի աշխատում է զորակոչի ընթացքում բժշկական հանձնաժողովի կազմում ընդգրկված համապատասխան բժիշկը, իսկ զորակոչիկի սեփական նախաձեռնությամբ իրականացված հետազոտության արդյունքները հաշվի են առնվում ըստ հայեցողության: Այսինքն ակնհայտ է շահերի բախումը, սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը, որոնք պետք է բացառվեն զորակոչիկի առաղջության վիճակի գնության գործընթացում, և պետք է տրվի առողջական վիճակի վերաբերյալ օբյեկտիվ, հիմնավոր և անաչառ ախտորոշում:**
- **Որոշակի առողջական խնդիրների հիմքով տարկետում ստանալու դեպքում հաջորդ զորակոչին զորակոչիկների բուժգննություններն իրականացվում են թերի,** քանի որ չեն բացահայտվում նոր ի հայտ եկած առողջական խնդիրները, որը հիմք է հանդիսանում հետագայում նրանց պիտանի ճանաչելու համար:

- Զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության փաստաթղթերը չեն արտացոլում վերջիններիս իրական առողջական վիճակը:
- Զորակոչիկների և վարժական հավաքների կանչվող պահեստազորում հաշվառված քաղաքացիների **գանգատները չեն արձանագրվում** իրականացվող բուժզննությունների ժամանակ:
- Հանձնաժողովների կողմից **պահեստազորում հաշվառված քաղաքացիները չեն ենթարկվում օրենքով սահմանված ծավալով բժշկական հետազոտությունների և փորձաքննության**, երբեմն պատճառաբանելով, որ պետության կողմից երաշխավորած անվճար բժշկական օգնության և սպասարկման սահմանված քանակը սպառված է, չնայած այն հանգամանքին, որ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, **պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:** Ավելին, քաղաքացիների ներկայացրած գանգատներին ի պատասխան հորդորում են ներկայացնել սեփական միջոցներով իրականացրած բժշկական հետազոտությունների եզրակացությունները: Նման մոտեցումն անընդունելի է, քանի որ ոչ բոլորն ունեն համապատասխան ֆինանսական միջոցներ բժշկական հետազոտություններ անցնելու համար, իսկ այդպիսի պայմաններում անձանց փորձաքննելիս ակնհայտ է, որ պիտանիության մասին կայացված որոշումները լինելու են չհիմնավորված, քանի որ չեն արտացոլելու անձի իրական առողջական վիճակը: Հարկ է նշել, որ **ՀՀ առողջապահության նախարարի կողմից՝ Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ենթակա քաղաքացիները ենթակա են արտահերթ սպասարկման՝ անկախ այդ**

ծառայությունների դիմաց փոխհատուցումը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից: (Տե՛ս *հավելված 1*)

- Հանձնաժողովներում **պահեստազորայինների այսպես կոչված բժշկական հետազոտությունն իրականացվում է միայն բանավոր՝ հակիրճ հարց ու պատասխանի միջոցով, որի արդյունքում անձինք ճանաչվում են պիտանի վարժական հավաքների մասնակցելու համար** և նրանց տրամադրում են ծանուցագրեր վարժական հավաքների մեկնելու մասին՝ առանց անհրաժեշտ և պարտադիր բժշկական հետազոտություններ իրականացնելու: *Նշենք, որ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման համաձայն՝ «2.1. Պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝1) միկրոպրեցիպիտացիայի ռեակցիան, 2) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը (եթե բացակայում է գրառում զինվորական գրքույկում), 3) ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը, 4) մեզի և արյան ընդհանուր քննությունը, 5) էլեկտրասրտագրումը, 6) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը, 7) տուբերկուլինային մաշկային փորձը»:*
- Զորակոչիկներին չեն տրամադրվում իրենց առողջական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ ակտերը և վերջնական եզրակացությունը:
- Մեկ այլ խնդիր է այն, որ որոշ դեպքերում, երբ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումներում քաղաքացիներին տրամադրում են բուժզննությունների ներկայանալու վերաբերյալ կարգագիր, նրանց **հորդորում են հնարավորինս շուտ անցնել բժշկական հետազոտություններ՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ քաղաքացուն նախատեսում են ներգրավել վարժական հավաքներին շուրջ վեց ամիս անց:** Վարժական հավաքների կանչվելուց վեց ամիս առաջ կատարված առողջական վիճակի հետազոտությունները կարող են բավարար չափով հավաստի չլինել, հատկապես որոշ սեզոնային հիվանդությունների դեպքում, որոնք դրսևորվում են միայն որոշակի եղանակային պայմաններում, օրինակ՝ ալերգիա, առրտայի,

մագիստրալ, պերիֆերիկ անոթների, ավշային անոթների հիվանդություններ և այլն: Բացի այդ, վեց ամիսը բավական երկար ժամանակահատված է, որի ընթացքում անձի առողջական վիճակում կարող են տեղի ունենալ էական փոփոխություններ:

3. Կենտրոնական բժշկական հանձնաժողովի վարքագիծը զորակոչի ընթացքում

ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշմամբ սահմանված է, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի/ԿԲՀ/ գործառույթներն են՝

1) ՀՀ զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովների (ԶԿԲՀ-ների) կողմից բժշկական փորձաքննություն անցած շարքային և պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվողների վերաբերյալ եզրակացություն կայացնելը, այդ թվում նաև զինվորական ծառայության չծառայած ժամկետն ուղարկելուն ենթակա քաղաքացիներին բժշկական փորձաքննության արդյունքներով.

2) բավարար հիմքերի առկայության դեպքում հայտարարված զորակոչի ընթացքում իր կողմից կայացված եզրակացությունները վերանայելը:

Ներկայացնենք պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի և վարժական հավաքների ընթացքում ԿԲՀ-ի կողմից իր գործառույթների իրականացման հետ կապված և արձանագրված խնդիրները

- Հաճախ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի **եզրակացությունը չի համապատասխանում զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներին:** Միևնույն առողջական խնդրի առկայությամբ երկու տարբեր զորակոչերին զորակոչիկները փորձաքննվում են միմյանցից էականորեն տարբերվող հոդվածներով՝ արդյունքում զինվորական ծառայության հետ անհամատեղելի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկը ճանաչվում է պիտանի զինվորական ծառայությանը:

- **Զորակոչիկը չի ուղեգրվում որակյալ և հետևաբար թանկարժեք բժշկական հետազոտության**, որի արդյունքում վերջինս ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, և միայն զորակոչիկի կողմից սեփական նախաձեռնությամբ հետազոտության արդյունքների հիման վրա է ԿԲՀ-ն ստիպված լինում փոխել իր որոշումը՝ զորակոչիկին ճանաչելով ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Նման հնարավորությունից զրկված զորկոչիկները փաստորեն ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը, ունենալով առողջական խնդիրներ, որոնք կարող են բացահայտվել միմիայն որակյալ բժշկական զննության արդյունքում:
- Նախկինում բուժման նպատակով տարկետում ստացած **զորակոչիկներն առանց արդյունավետ բուժման հաջորդ զորակոչին ճանաչվում են պիտանի** կամ սահմանափակումով պիտանի զինծառայության համար:
- Բուժզննությունների արդյունքում **երկու տարբեր ախտորոշումների դեպքում զորակոչիկը չի ուղարկվում ստուգիչ բժշկական հետազոտության**, իսկ **երբեմն հաշվի չեն առնվում զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ անցած բուժզննությունների արդյունքները**, և առանց դրանք հաստատելու կամ ժխտելու, ԿԲՀ -ն կայացնում է վերջնական որոշումը:
- **Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները,** իսկ բուժզննությունների արդյունքում արձանագրված հակասական տվյալների առկայության դեպքում ԿԲՀ-ն որոշում կայացնելիս հիմնվում է այն արդյունքների վրա, ըստ որոնց զորակոչիկը համարվում է պիտանի զինվորական ծառայության համար:

4. ՀՀ առողջապահության նախարարության բժշկական հաստատությունների վարքագիծը զորակոչի ընթացքում

Բժշկական հաստատությունները որոշիչ դեր ունեն ոչ միայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքների ներգրավման, այլ նաև պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց բուժզննությունների ենթարկելու գործընթացում:

Ներկայացնենք բժշկական հաստատությունների կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում արձանագրված խնդիրները, որոնց առնչվել են զորակոչիկները, վարժական հավաքի կանչված քաղաքացիները, զինծառայողները.

- **Բուժհաստատությունները շարունակում են չտրամադրել զորակոչիկների առողջական վիճակի հետազոտման ակտերի** և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված **եզրակացությունների օրինակները:** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: Նաև, ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման Հավելված 1-ի 36 կետում սահմանված է բուժհաստատության կողմից քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկություններ տրամադրելու պարտավորությունը:[9] Նշենք, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նշված խնդրի մասին

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121636

բարձրաձայնում է դեռևս 2013 թվականից[10]: 2022 թ. մարտի 18-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման դրվեց ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակված ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության նախագիծը[11]: Կազմակերպության կողմից առաջարկվեց, որ անձի կողմից իր առողջական վիճակի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները բժշկական կազմակերպությունը պարտավոր է տրամադրել անվճար և գրավոր կարգով՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում (հիմք ընդունելով զորակոչի ժամկետային սահմանափակումը): Առաջարկությունն ընդունվեց ՀՀ ՊՆ կողմից որոշակի փոփոխությամբ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվեց, որ առողջական վիճակի վերաբերյալ տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով»: Այնուամենայնիվ, խնդիրը դեռևս լուծված չէ, քանի որ բժշկական հաստատությունները չունեն պարտավորություն 5-օրյա ժամկետում անձին տրամադրել իր առողջական վիճակի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

- Բուժհաստատությունները հետազոտություններ իրականացնելիս **ոչ միշտ են առաջնահերթությունը տալիս զորակոչիկներին**, արդյունքում՝ վերջիններս **ստիպված են լինում սպասել հերթի մեջ՝ քաղաքացիական անձանց հետ միասին**, չնայած այն հանգամանքին, որ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են

[10] http://archive.hcav.am/wp-content/uploads/2014/11/%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013-2014_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf
[11] https://www.e-draft.am/projects/4112/about

նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: Սույն մասում նշված դեպքերում **քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում է առաջնահերթ ու անվճար**՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում»:

- Որոշ մասնավոր բուժհաստատություններ շարունակում են տարբերակված մոտեցում ցուցաբերել **զորակոչային տարիքի անձանց նկատմամբ՝ հրաժարվելով նրանց ենթարկել բժշկական հետազոտությունների՝** հաշվի չառնելով այն հանգամանքը, որ անձը ներկայացել է հետազոտության սեփական նախաձեռնությամբ և իր ֆինանսական միջոցների հաշվին:
- **Ռազմաբժշկական հաստատություններում բուժզննություն անցնող պարտադիր ժամկետային զինծառայողները հաճախակի ենթարկվում են բուժաշխատողների կոպիտ ու արհամարհական վերաբերմունքին**: Վերջիններիս կողմից զինծառայողներին նշանակվում է դեղորայք, որի ոչ անվանումը և ոչ օգտագործման նշանակությունը զինծառայողներին չեն բացատրում ՝ պատճառաբանելով, որ դա իրենց պետք չի և հորդորում են ուղղակի ընդունել նշանակված դեղորայքը:

5. ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը

Անդրադառնանք ՀՀ պաշտպանության նախարարության պարտավորությունների կատարմանը՝ պահեստազորում հաշվառված անձանց, գերությունից վերադարձած զինծառայողների, անհայտ կորած անձանց հարազատների իրավունքներին վերաբերվող հարցերում:

- Չնայած ընտանեկան կարգավիճակի պատճառով **վարժական հավաքներից անձանց ազատելու վերաբերյալ** Կազմակերպության դիմումներին ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման մեջ կատարվել են **փոփոխություններ և լրացումներ, որոնք գտնվում են շրջանառության և հաստատման փուլում, այնուամենայնիվ փոփոխությունները դեռևս չեն ընդունվել,** և ներկայումս վարժական հավաքների շարունակում են կանչվել անձինք, ում

ընտանեկան պայմանները թուլ չեն տալիս նույնիսկ կարճ ժամկետով բացակայել ընտանիքից: (Տե՛ս *հավելված 1*)

- Ներկայումս Կառավարությունը փորձում է կարգավորել վարժական հավաքների կանչվող քաղաքացիների ոչ միայն աշխատատեղի, այլ նաև աշխատավարձի պահպանման հետ կապված հարցերը՝ առաջարկելով գործատուին, աշխատողին մինչև 30 օր ժամկետով վարժական հավաքների ներգրավելիս, յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողին վճարել աշխատողի հիմնական աշխատավարձի և որպես զինծառայողի հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը: Մինչդեռ **հստակ չէ, թե ինչպես պետք է կարգավորվի, օրինակ, անհատ ձեռներեց հանդիսացող պահեստազորում հաշվառված անձանց աշխատավարձի խնդիրը այն դեպքում, երբ վերջինս իր բացակայության ընթացքում եկամուտ չի ունենալու, ինչը հանգեցնելու է նրա և նրա ընտանիքի ֆինանսական վիճակի վատթարացմանը, հատկապես այն դեպքերում, երբ անձն ունի վարկային պարտավորություններ և շատ ավելի բարձր ամսական եկամուտ,** քան սահմանված է ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» որոշմամբ՝ որպես նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ:
- Հաճախակի հանդիպող խնդիրներից է **գերությունից վերադարձած զինծառայողին զինվորական ծառայության մեջ ներգրավումը՝ առանց վերջինիս առողջական վիճակի համալիր հետազոտման, այդ թվում՝ հոգեբանական արդյունավետ աջակցության տրամադրման և վերականգնման:** Արձանագրենք, որ 2022 սեպտեմբերի 13-ի մարտական գործողություններից հետո Կազմակերպություն են դիմել 4 զինծառայողներ, ովքեր հայտնել են, որ մարտական գործողությունների ընթացքում գերեվարվելուց և հետագայում հայրենադարձվելուց հետո որոշել են իրենց կրկին ներգրավել զինվորական ծառայության մեջ՝ առանց ֆիզիկական և հոգեբանական համալիր և արդյունավետ հետազոտության և վերականգնման, առանց պատշաճ

ապաքինման, ունենալով առողջական լրջագույն խնդիրներ որոնք առաջացել են գերության ժամանակ խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու հետևանքով: Գերեվարված զինծառայողներին հայրենադարձվելուց հետո զինվորական ծառայության վերադարձնելու մի քանի դեպքերով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն: Արդյունքում, նրանք ճանաչվել են ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

- **Անհայտ կորած անձանց հարազատներին** հաճախ հայտնում են, որ **անձին անհայտ բացակայող ճանաչելու համար դատարան դիմելու դեպքում որոնողական աշխատանքներ չեն իրականացվի**, որի պատճառով ընտանիքները խուսափում են դիմել դատարան, ինչը հնարավորություն կտար նրանց օգտվելու սոցիալական աջակցության ծրագրերից:
- Կարևոր խնդիրներից է **նաև միջգերատեսչական ոչ արդյունավետ համագործակցությունը,** օրինակ, երբ Կառավարության կողմից որոշում է ընդունվում վարժական հավաքներ հայտարարելու մասին, որը ուժի մեջ է մտնում հաջորդ օրը, իսկ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները քաղաքացիներին ծանուցում են արդեն իսկ հաջորդ օրը ներկայանալու եւ ծառայության վայր մեկնելու մասին՝ առանց հաշվի առնելու վարժական հավաքների ներկայանալու պարտավորության մասին օրենքով սահմանված 20-օրյա ժամկետը:
- Չնայած **«զինկոմիսարիատ» տերմինը փոխարինվել է «Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում» տերմինով,** այնուամենայնիվ որոշ իրավական ակտեր դեռևս չեն ենթարկվել անհրաժեշտ փոփոխությունների:

Ներկայացնենք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով սահմանված ժամկետների պահպանման պատկերը

Կազմակերպության ուղարկած գրությունների պատասխանների ժամկետների հիման վրա:

2021 թ. (օգոստոս) - 2023 թ. (հունվար) ժամանակահատվածում Կազմակերպությանը դիմած զորակոչիկների և պահեստազորում հաշվառված անձանց իրավական աջակցության շրջանակներում ուղարկվել է ընդհանուր առմամբ 44 գրություն՝ ուղղված ՀՀ պաշտպանության նախարարությանը (ի գիտություն ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությանը):

Կազմակերպության կողմից ուղարկված գրություններից 34 %-ի պատասխանը տրվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ, 5 %-ի պատասխանները չեն անդրադառնում գրությամբ բարձրաձայնված խնդիրների լուծմանը: Հավելենք, որ սույն տվյալները ներառում են ՀՀ ՊՆ-ի չպատասխանելու դեպքում Կազմակերպության կողմից ուղարկված կրկնակի ուղարկված գրությունների պատասխանների վիճակագրությունը: Մինչդեռ կան դեպքեր, երբ նույնիսկ կրկնակի գրություններին պատասխան չի տրամադրվել:

Աղյուսակ 1. Կազմակերպություն դիմած անձանց խնդիրներով 2021 թ. (օգոստոս) - 2023 թ. (հունվար) ժամանակահատվածում ՀՀ ՊՆ ուղարկված գրություններին տրամադրված պատասխանների ժամկետները

Ուղարկված գրությունների թիվը	Ժամանակին		Ուշացումով		Չի պատասխանվել	Ի գիտություն ուղարկված/ պատասխան չենթադրող գրություն
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Ըստ էության	Ոչ ըստ էության		
44	28	1	7	1	4	5

Ինչ վերաբերում է համակարգային խնդիրների վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղարկված գրությունների պատասխաններին, ապա նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածում ուղարկվել է **27 տեղեկատվության հարցում և դիմում, որոնցից 70 %-ին (19-ին) տրամադրվել է պատասխան օրենքով սահմանված ժամկետից ուշ, 30 %-ին (8-ին) օրենքով սահմանված ժամկետում:**

Բացի այդ, 30 %-ի դեպքում տեղեկության տրամադրումը մերժվել է ամբողջությամբ կամ մասնակի:

Աղյուսակ 2 . 2021 թ. (օգոստոս) - 2023 թ. (հունվար) ժամանակահատվածումՀՀ ՊՆ ուղարկված տեղեկատվության հարցումներին տրամադրված պատասխանների ժամկետները

Ուղարկված գրությունների թիվը	Ժամանակին					Ուշացումով		
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Տեղեկության տրամադրման մերժում	Տեղեկացում՝ այլ կառույցին դիմելու մասին	Դիմումի մերժում՝ առաջարկը ոչ նպատակահարմար համարելու հիմքով[12]	Ըստ էության	Ոչ ըստ էության	Տեղեկության տրամադրման մերժում / մասնակի մերժում
27	5	0	1	1	1	12	0	7

Անդրադառնալով ՀՀ պաշտպանության նախարարության վարքագծին՝ հարկ է նշել, որ գերատեսչության կողմից նկատվում է գաղտնիության բարձր մակարդակ, հատկապես տեղեկությունների տրամադրման հարցում: Նշված խնդրին Կազմակերպությունն անդրադարձել է 2021 թ. հրապարակված «ՀՀ պաշտպանության

[12]Կազմակերպությունը թույլատվություն էր խնդրել ՀՀ ՊՆ-ից՝ ՀՀ զինվորական հոսպիտալներում 2021-2022 թթ-ի ընթացքումմարդու իրավունքների վիճակի մոնիթորինգիրականացնելու համար, սակայն ՀՀ ՊՆ-ն հոսպտիալների այցելությունը ներկայումս գտնել է ոչ նպատակահարմար, քանի որ այն կարող է զգալիորեն դժվարացնել հոսպիտալների առօրյա գործունեության պատշաճ կազմակերպումը:

նախարարության վարքագիծը՝ տեղեկությունների տրամադրման հարցում» տեղեկանքում[13]:

6. ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոն ՊՈԱԿ, քննչական մարմիններ

44-օրյա պատերազմից հետո մինչ օրս անհայտ կորած անձանց (զինծառայողների) հարազատները բախվում են մի շարք խնդիրների՝ կապված դատաբժշկական փորձաքննության արդյունքների հետ : Մասնավորապես՝

- ԴՆԹ նմուշառման համընկնման դեպքում անհայտ կորած անձանց՝ մահացածների համապատասխան ցուցակ տեղափոխելիս անձանց հարազատներին չի տրամադրվում դատաբժշկական փորձաքննության եզրակացության օրինակը, ինչի հետևանքով վերջիններս չեն կարողանում դիմել զինծառայողների ապահովագրության հիմնդրամ՝ ֆինանսական աջակցությունից օգտվելու համար: Կազմակերպությանն այս հարցով դիմել է 2 անհայտ կորած զինծառայողի հարազատ, որոնցից 1-ի գործով Կազմակերպության կողմից գրություններ են ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոն ՊՈԱԿ և ՀՀ քննչական կոմիտե: Եվ Կազմակերպության դիմումից միայն 9 ամիս անց ՀՀ քննչական կոմիտեի կողմից զինծառայողի հարազատներին տրամադրվեց զինծառայողի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության օրինակը:
- Անհայտ կորած զինծառայողների հարազատներին ներկայացված մասունքները չեն համապատասխանում զինծառայողների կառուցվածքին, մասնավորապես՝ Կազմակերպություն դիմած 104 անհայտ կորած անձանց հարազատներից 15%-ի դեպքում նկատվել են ատամնաշարի տարբերություն, 11%-ի դեպքում հանձնված ոսկորն ընդհանրապես անճանաչելի է եղել, 7%-ի դեպքում չի համապատասխանել

[13]https://hcav.am/wp-content/uploads/2021/10/%D5%8A%D5%86-%D5%A3%D5%A1%D5%B2%D5%BF%D5%B6%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84.pdf

ոտքի չափսը, մյուս բոլոր դեպքերում նկատվել են միաժամանակ մի քանի անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ատամնաշարի կառուցվածքի, մարմնի մասերի չափսի, գանգի կառուցվածքի, ծնոտի ձևի, մարմնի ընդհանուր կազմվածքին, մարմնի վրա առկա նշաններին, անձի մոտ գտնվող առարկաներին: Որոշ դեպքերում բացակայել է զինծառայողի վերնահագուստը, մարմնի նշանը՝ խալը չի եղել, ընտանիքին հայտնել են, որ անհայտ կորածը տանկի վրա է եղել ու այրվել է, սակայն մասունքն այրված չի եղել:

Ի դեպ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած անհայտ կորած զինծառայողների հարազատների հետ հանդիպումների արդյունքում արձանագրված խնդիրները ներկայացված են ***«2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքի անդամների իրավունքների վիճակը»*** զեկույցում[14]:

[14] https://hcav.am/situation-of-the-rights-of-persons-missing-as-a-result-of-the-44-day-hostilities-of-2020/

ՄԱՍ 2

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԴԵՊՔԻ ԱՌԹԻՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՄ ԶՈՐԱՑՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ ՀՀ ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Կազմակերպությունը զբաղվում է զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա անձանց, պարտադիր ժամկետային զինծառայողների, պայմանագրային զինծառայողների, սպաների, այդ թվում զինվորական ծառայությունից արձակված և վաղաժամ արձակված, սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների, պահեստազորում հաշվառված անձանց, զորացրված պարտադիր ժամկետային զինծառայողների, զորացրված և վաղաժամ զորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, զոհված զինծառայողների հարազատների, անհայտ կորած զինծառայողների հարազատների, ռազմագերիների մարդու իրավունքներին առնչվող խնդիրներով: Թվարկված անձանց խմբերի խնդիրները հիմնականում կապված են ՀՀ պետական հետևյալ մարմինների գործունեության հետ՝

- ՀՀ պաշտպանության նախարարություն,
- Կենտրոնական բժշկական հանձնաժողով,
- Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով,
- ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբ,
- ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչություն,
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն և տարածքային ստորաբաժանումներ (նախկին զինվորական կոմիսարիատներ),

- ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններ,
- ՀՀ ԱՆ Դատաբժշկական գիտաագործնական կենտրոն ՊՈԱԿ
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակ,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ:

Իրավական աջակցություն ստանալու նպատակով կազմակերպություն դիմած զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկների, պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, սպաների, զորացրված (այդ թվում՝ վաղաժամ) պարտադիր ժամկետային, պայմանագրային զինծառայողների և սպաների իրավունքների պաշտպանությունն իր մեջ հիմնականում ներառել է՝

- նշված անձանց վերաբերյալ կայացված որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկում՝ վարչական և դատական կարգով,
- զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու դեպքի առթիվ զորակոչիկի նկատմամբ հարուցված քրեական գործով իրավական աջակցության տրամադրում,
- վաղաժամ զորացրված զինծառայողի առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի կամ ոչ իրավաչափ զորակոչման հետ կապված գործերով իրավական աջակցության տրամադրում,
- ռազմական գործողությունների մասնակիցների կամ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության իրավունքի ապահովման և դրամական փոխհատուցման հետ կապված գործերով իրավական աջակցության տրամադրում:
    - Ներկայումս ՀՀ դատարանների վարույթում են գտնվում նշված խմբի անձանց գործերով հարուցված 29 դատական գործեր, որոնցից՝
- 17 դատական գործեր գտնվում են ՀՀ վարչական դատարանի վարույթում,

- 3 դատական գործեր՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի վարույթում,
- 6 դատական գործեր՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում (քաղաքացիական գործեր),
- 3 դատական գործեր՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում (քրեական գործեր)։
- Նշված 29 դատական գործերից՝
- 4 դատական գործերը հարուցվել են 2017 թ-ին,
- 1 դատական գործ՝ 2018 թ-ին,
- 1 դատական գործ՝ 2019 թ-ին,
- 2 դատական գործեր՝ 2020 թ-ին,
- 6 դատական գործեր՝ 2021 թ-ին,
- 13 դատական գործեր՝ 2022 թ-ին,
- 2 դատական գործեր՝ 2023 թ-ին:

Ինչպես տեսնում ենք, գործերի գերակշիռ մասը դատարաններում հարուցվել են 2022 թ.՝ 13 դատական գործ։ Նշված գործերից 7-ը վերաբերում են առողջական խնդիրների հիմքով զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրված և զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանությանը։ Այս խմբի անձանց իրավունքների պաշտպանության վիճակին Կազմակերպությունն անդրադարձել է առանձին տեղեկանքով[15], դրանով արձանագրված խնդիրների լուծման վերաբերյալ ներկայացրել առանձին առաջարկություններ։

Ներկայացվող զեկույցում անդրադառնում ենք պետական մարմինների վարքագծին և մոտեցումներին վերը նշված խմբերի ներկայացուցիչների մարդու իրավունքների վերաբերող հարցերի, խնդիրների լուծման ժամանակ։

7. Կայազորային քննչական մարմինների վարքագիծը զինվորական ծառայության զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի քննության ընթացքում.

[15] https://hcav.am/hcav-31-01-2023/

Կազմակերպությունը շարունակում է անվճար իրավական աջակցություն տրամադրել այն զորակոչիկներին, ովքեր համաձայն չլինելով զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին ոչ իրավաչափ եզրակացությունների հետ՝ բողոքարկում են վերադաս մարմիններին և դատական ատյաններ: Նշված բոլոր դեպքերում, երբ զորակոչիկը հրաժարվում է զինվորական ծառայության զորակոչվելու ծանուցագիր ստանալուց, անկախ դրա պատճառներից, դեպքի վերաբերյալ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման միջնորդության հիման վրա համապատասխան կայազորային քննչական մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվում է քրեական գործ և զորակոչիկի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Սույն գործերով վարույթն իրականացնող մարմինը շարունակում է հաշվի չառնել և պատշաճ քննության առարկա չդարձնել զինվորական ծառայության մեկնելուց հրաժարվելու պատճառները և հիմնավորումները. մասնավորապես՝որոշ զորակոչիկներ, համաձայն չլինելով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հետ, այն բողոքարկում են օրենքով սահմանված կարգով՝ վիճարկելով իրենց վերաբերյալ կայացված պիտանի ճանաչելու մասին եզրակացությունը, սակայն նշված հանգամանքը քննության առարկա չի դառնում քրեական գործի շրջանակներում, հաշվի չեն առնվում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված իր վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման իրավունքը:

Նշված հանգամանքը հաշվի չի առնվում նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում: Վարույթն իրականացնող մարմինը շարունակում է նշանակել դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի հիման վրա քննչական մարմինը պարզում է՝ արդյոք Կենտրոնական բժշկական հանձնաժողովը ճիշտ որոշում է կայացրել զորակոչիկի զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու մասին հարցի վերաբերյալ, սակայն միայն դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության

իրականացումը բավարար չէ. նշված փորձաքննությամբ հնարավոր է պատասխանել միայն այն հարցերին, թե զորակոչիկն ինչ հիվանդություն ունի, երբ է այն առաջացել, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ այլ հարցեր (օրինակ՝ ինչ դրսևորումներ ունի հիվանդությունը, զորակոչի ընթացքում զորակոչիկն ունեցել է այդ հիվանդությունը, թե ոչ): Մինչդեռ, ռազմաբժշկական փորձաքննությունը կարող է պարզել, թե որքանով են օբյեկտիվ եղել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի գործողությունները, ինչ որոշում պետք է կայացվեր զորակոչիկի զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին հարցի վերաբերյալ, որ հոդվածով կամ հոդվածներով պետք է վերջինս փորձաքննվեր: Հաշվի առնելով նախորդ վերլուծությամբ բացահայտված խնդիրները[16]՝ առաջարկել էինք դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն՝ հիմքում ընդունելով համապատասխան իրավական ակտի՝ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 87-Ն հրամանի այն սահմանումը, որ զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ, հիվանդությունների հիմնավորվածության և առկայության վերաբերյալ հարցերը լուծվում են դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննության ընթացքում, սակայն նշված առաջարկը մինչ օրս չի ընդունվել: Նշված համատեքստում հարկ է արձանագրել, որ այն բոլոր քրեական գործերով, որոնք մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ և որոնցով Կազմակերպությունը ստանձնել է զորակոչիկների իրավունքների պաշտպանությունը, դատաքննության փուլում զորակոչիկների միջնորդության հիման վրա գործը քննող դատավորների որոշմամբ նշանակվել են դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություններ, ինչպես օրինակ՝ Ա. Դ.-ի[17], Ն. Ս.-ի[18] գործերով:

Հարկ է փաստել նաև, որ ինչպես նախկինում, այնպես էլ դիտարկվող ժամանակահատվածում, անկախ նախաքննության ընթացքում իրականացված

[16] https://hcav.am/hcav-report-6-10-2021/
[17] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438245053,%20%20https://hcav.am/ad-pordzaqnnutyun/
[18] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203970699,%20https://hcav.am/n-s-22-12-2022/

քննչական գործողություններից՝ գրեթե յուրաքանչյուր զորակոչի ընթացքում քննչական մարմինը զորակոչիկի գործն ուղարկում է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանում, որպեսզի որոշվի վերջինիս զորակոչման հարցը, և ինչպես քննչական մարմինն, այնպես էլ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումը յուրաքանչյուր զորակոչի ժամանակ զորակոչիկներին «հորդորում» են վերանայել իրենց՝ զինվորական ծառայության չմեկնելու որոշումը:

Այսպիսով, արձանագրում ենք, որ քննարկվող ժամանակահատվածի համար զորակոչիկների դեմ հարուցված քրեական գործերով քննչական մարմինների վարքագծում էական փոփոխություն տեղի չի ունեցել և քննչական մարմինները, թեև ոչ բոլոր գործերով, սակայն շարունակում են հանդես գալ որպես զորակոչ ապահովող մարմին:

8. ՀՀ պաշտպանության նախարարության և վերջինիս կազմի մեջ մտնող իրավասու ստորաբաժանումների վարքագիծը՝ զորակոչիկների և զինծառայողների (այդ թվում՝ պայմանագրային) վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման հետ կապված գործերով.

Զորակոչի ընթացքում կազմակերպություն դիմած այն զորակոչիկների գործերով, երբ վերջիններս համաձայն չեն եղել զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումների հետ, համապատասխան հիմնավորումներով բողոքներ են ներկայացվում ՀՀ պաշտպանության նախարարին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: Պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների գործերով ևս, երբ վերջիններս չեն համաձայնում զինվորական ծառայության ընթացքում զինվորական ծառայության հետ կապված ընդունվող որոշումների, գործողության կամ անգործության հետ, համապատասխան հիմնավորումներով բողոքներ են ներկայացվում նաև ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

Գրեթե բոլոր գործերով իրավասու վարչական մարմինը մերժում է կազմակերպության կողմից բերված բողոքը՝ հիմնավոր համարելով ստորադաս վարչական մարմնի վարչարարության իրավաչափությունը: Ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատճաշ քննարկման առարկա չեն դառնում ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, որն էլ հիմք է հանդիսանում նշված որոշումը, գործողությունը կամ անգործությունը հետագայում դատական կարգով բողոքարկելու համար: Բացի այդ, Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները շարունակում են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ համապատասխան կայազորային քննչական բաժիններ ներկայացնել նաև այն զորակոչիկների անձնական գործերը, ովքեր համաձայն չլինելով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունների հետ, վիճարկում են նշված եզրակությունները վարչական և դատական կարգով: Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները նման վարքագիծ դրսևորում են նույնիսկ այն ժամանակ, երբ Վարչական դատարանը վարույթ է ընդունում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ զորակոչիկի կողմից ներկայացված հայցադիմումը: Նման վարքագիծն անթույլատրելի է, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասն իմպերատիվ կերպով սահմանում է, որ վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է: Օրինակ, Ա. Պ.-ն 2022 թ. հունվարի 20-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի ոչ իրավաչափ եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նույն օրը զորակոչիկը գրությամբ դիմել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն՝ ձեռնպահ մնալու իրեն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչելուն ուղղված որևէ գործողություն իրականացնելուց, այդ թվում՝ ՀՀ կառավարության «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգ հաստատելու մասին» 4 հոկտեմբերի 2018 թ.

N 1132-Ն որոշման հավելված N 1-ի 37-րդ կետի համաձայն իր անձնական գործը քրեական գործ հարուցելու միջնորդությամբ համապատասխան կայազորային քննչական բաժին ներկայացնելուց, մինչև վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունը մերժել է ներկայացված պահանջն այն պատճառաբանությամբ, որ անհրաժեշտ է ներկայացնել հայցի ապահովման միջոց՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչելուն ուղղված գործողություններ իրականացնելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ: Վարչական դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո Ա. Պ.-ն նույն պահանջով կրկին դիմել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն, սակայն նույն պատճառաբանությամբ դարձյալ ստացել է մերժում, իսկ անձնական գործը Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից քրեական գործ հարուցելու միջնորդությամբ ուղարկվել է համապատասխան կայազորային քննչական բաժին, որտեղ հարուցվել է քրեական գործ և իրականցվել նախաքննություն: Հարկ է նշել, որ այս գործով Վարչական դատարանը բավարարել է Ա. Պ.-ի պահանջը և անվավեր է ճանաչել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունն՝ արձանագրելով Ա. Պ.-ի իրավունքների խախտումը:

Վերը նշվածը հաշվի առնելով արձանագրում ենք, որ քննարկվող գործերով ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը, զորակոչի և զինվորական ծառայության ընթացքում ընդունվող որոշումների, գործողության կամ անգործության դեմ ներկայացված բողոքների ոչ պատշաճ քննության վերաբերյալ, քննարկվող ժամանակահատվածի համար որևէ դրական փոփոխության չի ենթարկվել, չնայած այն հանգամանքին, որ նշված խնդրին Կազմակերպությունն անդրադառնում է սկսած 2016 թ.-ից:

9. ՀՀ վարչական դատարանի վաքագիծը՝ զորակոչիկների և զինծառայողների վերաբերյալ կայացված որոշումների, գործողության կամ անգործության բողոքարկման հետ կապված գործերով.

Քննարկվող գործերով հիմնական խնդիրը կրկին գործերի քննության ժամկետներն են. նախորդ վերլուծություններով բացահայտված խնդիրները հաշվի առնելով[19]՝ առաջարկ էր ներկայացվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռեր դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը, որպես օրինակ հաշվի առնելով ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով սահմանված հատուկ ժամկետները։ Նշված առաջարկը մինչ օրս չի ընդունվել, իսկ իրավիճակը շարունակում է նույնը մնալ. դատական գործերի քննության երկար ժամկետները պահպանվում են, իսկ որոշ դեպքերում զորակոչիկները հերթական զորակոչին կանչվում են Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ և կրկին անցնում հետազոտություններ, իսկ այն դեպքում, երբ հրաժարվում են ստանալ զինվորական ծառայության մեկնելու վերաբերյալ ծանուցագրերը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին մասով արդեն իսկ հարուցված քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է: Օրինակ, S. U.-ն 2022 թ. ամառային զորակոչին Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ սահմանափակումով պիտանի է ճանաչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար, սակայն առողջական վիճակի թերի հետազոտությունների և բժշկական ոչ օբյեկտիվ փորձաքննություն իրականացնելու պատճառաբանությամբ հրաժարվել է մեկնել զինվորական ծառայության, որի արդյունքում զորակոչից խուսափելու դեպքի առթիվ

[19] https://hcav.am/16-01-2020-pn/ , https://hcav.am/hcav-report-6-10-2021/

հարուցվել է քրեական գործ: Հաջորդ զորակոչերի ընթացքում Տ. Ս.-ն Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից ենթարկվել է հետազոտությունների, որի արդյունքներով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է բուժման կարիք ունեցող, տրամադրվել է 10 ամիս ժամկետով տարկետում, սակայն քրեական գործի նախաքննությունը շարունակվել է: Հարկ ենք համարում նաև արձանագրել, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կայացված վերը նշված եզրակացությունը Տ. Ս.-ն բողոքարկել է և վարչական, և դատական կարգով: Վարչական բողոքը Պաշտպանության նախարարության կողմից մերժվել է, իսկ Վարչական դատարանը մինչ օրս չի կայացրել գործն ըստ էության լուծող դատական ակտ, մինչդեռ 10 ամսով տարկետում տրամադրելու ժամանակահատվածն ավարտվել է: Ինչպես արդեն նշել ենք, խնդրի լուծումը գործի քննության օրենքով սահմանված այնպիսի ժամկետների սահմանումն է, որը հնարավորություն կտա դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը:

Միևնույն ժամանակ, կրկին արձանագրում ենք, որ վարչական դատարանը զորակոչիկների և զինծառայողների վերաբերյալ կայացված որոշումների, գործողության կամ անգործության բողոքարկման հետ կապված գործերի քննության դեպքում դրսևորել է անկողմնակալ վարքագիծ:

10. ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարքագիծը՝ վաղաժամ զորացրված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին գործերով.

Ներկայումս Կազմակերպության կողմից տրամադրվող անվճար իրավական աջակցության շրջանակներում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում են գտնվում առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին 4 գործեր, որոցից 1-ով դատարանը վճռել է հայցվորի պահանջը մերժել, սակայն վճիռը դեռևս օրինական ուժի մեջ չի մտել և ենթակա է

վերաքննության կարգով բողոքարկման: Ինչպես ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող գործերի, այնպես էլ այս դեպքում հիմնական խնդիրը վերաբերվում է գործերի քննության ժամկետներին: Մասնավորապես՝ վերը նշված դատական գործերից 3-ը դատարանում հարուցվել են 2017 թ., սակայն դրանցից 2-ը դեռևս գտնվում են գործի քննության նախնական փուլում, ուստի քննարկվող գործերով դատարանի վարքագծի մասին դիրքորոշում հայտնելը հերթական անգամ վաղ ենք համարում՝ հաշվի առնելով գործերի նախնական քննության փուլում գտնվելն ու դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բացակայության հանգամանքը:

Կրկին հարկ է ընդգծել, որ գործով պատասխանողներ ներգրավված ՀՀ պաշտպանության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դրսևորվող միատեսակ դիրքորոշումն ու մոտեցումը չի փոփոխվել, և վերջիններս բոլոր գործերով շարունակում են պնդել, որ վաղաժամ զորացրված զինծառայողների առողջությանը պատճառված վնասը փոխհատուցելու հիմքերը բացակայում են:

ՄԱՍ 3

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտում ռազմավարական դատավարությունների իրականացումն է: Ներկայումս կազմակերպության իրավաբանների վարությում է գտնվում զինվորական ծառայության ընթացքում հիմնարար իրավունքների խախտման դեպքերին վերաբերող 6 ռազմավարական նշանակության գործեր: Մատնանշված գործերից 2-ը սկսվել են դեռևս 2016 և 2017 թվականներից: Ի սկզբանե գործի քննության ընթացքում իրականացվել են անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ, նշանակվել են փորձաքննություններ, ստացվել են դրանց վերաբերյալ եզրակացությունները, սակայն վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործերի վարույթը կասեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով: Վարույթն իրականացնող մարմնի որդեգրած այս անթույլատրելի պրակտիկան, որը կիրառվում էր մինչև 2022թ. հուլիսի 1-ն ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործարկումը, հանգեցնում է մարդու հիմնարար իրավունքի խախտմանը, այնքանով, որքանով որ այն որպես գործի ավարտ չի հանդիսանում, և քրեական գործի կասեցման դեպքում տուժողը, ըստ ազգային օրենսդրության, զրկվում է քրեական գործի նյութերին, ձեռք բերված ապացույցներին, հնարավոր մեղադրյալների շրջանակին, և ընդհանրապես քննչական գործողությունների արդյունավետությանը ծանոթանալու և ըստ դրա իր դատավարական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից: Փաստացի, քրեական գործի վարույթը կասեցնելու միջոցով վարույթն իրականացնող մարմինը՝ կիրառելով ազգային օրենսդրության նորմերը, արդյունավետ քննություն չի իրականացնում:

2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ նախորդ տարիներին կասեցված բոլոր վարույթները մինչև 2023 թ. հունվարի 31-ը պետք է վերաբացվեն և վերսկսվի քննությունը: Այս պայմաններում, վերաբացումից հետո էլ դեռևս նշված գործերով առաջընթաց կամ բացահատումներ չեն արձանագրվել:

Այսպիսով, արձանագրում ենք, որ քրեական գործերը, հատկապես զինվորական ծառայության հետ կապված հանցագործությունների դեպքերով, քննվում են շատ երկար, չեն պահպանվում գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքները: Օրինակ Վ. Ֆ.ի գործով մեր կողմից արձանագրված խնդիրն այն է, որ դեռևս 2022 թվականի փետրվար ամսին հարուցված քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը հանցագործության բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ որևէ տեսանելի գործողություններ չի իրականացրել, որի արդյունքում շարունակվում է խախտված մնալ զինծառայող Վ. Ֆ.ի մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված խոշտանգումներից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու բացարձակ իրավունքը: Գործի քննությունն արդեն շարունակվում է մեկ տարուց ավելի, սակայն դեռևս մեղավորները բացահայտված չեն, որևէ անձ չի ենթարկվել պատասխանատվության:

Մեկ այլ գործով, որը վերաբերում է 2020 թ սեպտեմբերյան 44-օրյա պատերազմի հետևանքով մի խումբ անհայտ կորած զինծառայողների իրավունքներին, արձանագրել ենք, որ նախաքննություն իրականացնող մարմինը տուժողի իրավահաջորդներին անհիմն ու անհասկանալի պատճառներով գործի քննության ընթացքում երկար ժամանակ գործով դատավարական կարգավիճակ չի տվել, մասնակից չի դարձրել իրականացվող քննությանը: Անհայտ կորած զինծառայողների հարազատները տուժողի իրավահաջորդի կարգավիճակ ստացան և մասնակից դարձան գործի վարույթին միայն

կազմակերպության փաստաբանների ներգրավվելուց և համապատասխան միջնորդություններ ներկայացնելուց հետո:

Մատնանշված մյուս երկու գործերը դեռևս գտնվում են նախաքննության փուլում, այս գործերով կազմակերպության փաստաբանները ներգրավվել են քրեական գործի հարուցման սկզբից, և այդ գործերով ևս արձանագրում ենք, որ չի պահպանվում արդյունավետ քննության և ողջամիտ ժամկետները:

Տարիներ շարունակ ռազամավարական դատավարությունների իրականացմամբ նպատակ ենք ունեցել հիմնարար իրավունքների պաշտպանությամբ փոխել գոյություն ունեցող ոչ արդյունավետ պրակտիկան, միատեսակ կիրառության հարցեր լուծել հենց ներպետական ատյաններում, սակայն ոչ միշտ ենք կարողացել հասնել արդյունքի: Հիմնարար իրավունքների պաշտպանության բնագավառում ներպետական ատյաններում արդյունքի չհասնելով, դիմումներ են ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Զինծառայության ընթացքում մարդու իրավունքների հիմնարար իրավունքների խախտման դեպքերով Կազմակերպության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել 20 դիմում: Ներկայացված դիմումներից 4-ն արդեն Դատարանի կողմից ընդունվել են վարույթ, մի մասը գտնվում են կոմունիկացիայի փուլում, կամ արդեն սպասվում են վճիռներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացվելիք վճիռներով, մեր գնահատմամբ, կարձանագրվեն կարևորագույն խնդիրներ, որոնք նախադեպի ուժով կտարածվեն նմանատիպ իրավահարաբերությունների վրա:

Կազմակերպության կողմից ՄԻԵԴ գանգատներ են ներկայացվել նաև Ադրբեջանի կողմից ՀՀ և Արցախի նկատմամբ սանձազերծված պատերազմների ընթացքում գերեվարված անձանց հիմնարար իրավունքների հիմքով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Անդրադառնալով պաշտպանության գերատեսչության, իրավապահ և դատական մարմինների կողմից զորակոչի, վարժական հավաքների, զինվորական ծառայության կազմակերպման բնագավառներում մարդու իրավունքների չափանիշների պաշտպանության վիճակին, **արձանագրենք հետևյալ խնդիրները**.

Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և տարածքային ստորաբաժանումների հետ կապված

- Բժշկական հետազոտությունների համար զորակոչիկներին **տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը բավարար չէ մարզերից Երևան մեկնելու համար**:
- Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների աշխատակիցները շարունակում են արհեստական խոչընդոտներ ստեղծել զորակոչիկներին **իրենց առողջական վիճակի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը տրամադրելու հարցում՝ տրամադրելով միայն դրանց մի մասը:**
- Քաղաքացիների **ծանուցումը չի իրականացվում պատշաճ կարգով**, չնայած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է «զինկոմիսարիատ» (Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում) ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փոխարենը՝ **ծանուցման թերթիկը հանձնում են կամ տանը գտնվող այլ անձանց, կամ ծանուցում են զանգի միջոցով, երբեմն՝ ոչ անմիջապես զորակոչիկին:**

- Վարժական հավաքներին կանչվող պահեստազորայինները ևս ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումներ ներկայանալու մասին ծանուցվում են հեռախոսազանգով:

- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումներում **բացակայում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների կողմից իրենց առողջության վիճակի վերաբերյալ նախկինում ներկայացված փաստաթղթերը:**

- Վարժական հավաքների մասնակցելու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ են **կանչվում վերջին մեկ տարվա ընթացքում եռամսյա վարժական հավաքներին մասնակցած պահեստազորայինները**:

- Պահեստազորում հաշվառված անձանց ծանուցում են մասնակցելու վարժական հավաքներին, որոնք դեռևս չեն հայտարարվել:

- Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում **վերցնում են անձանց զինվորական գրքույկները և առանց հիմնավոր պատճառի տևական ժամանակ հետ չեն վերադարձնում:**

- 44-օրյա պատերազմական գործողություններին մասնակցած անձանց **մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու համար վերջիններիս վրա է դրվում փաստաթղթերի ներկայացման պարտականությունը:**

- 44-օրյա պատերազմի **մասնակիցների զինվորական գրքույկներում չեն կատարվում համապատասխան գրառումներ այդ մասին**:

- ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումները գերությունից վերադարձած և ապա վաղաժամ զորացրված զինծառայողների վերաբերյալ փաստաթղթերը՝ այդ թվում նաև զինվորական գրքույկները, տրամադրում են ավելի քան 6 ամիս անց:

Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բժշկական հանձնաժողովների հետ կապված

- Բժշկական հետազոտություն անցնելու նպատակով հանձնաժողովների **կողմից զորակոչիկներին հատկացված ուղեգրերում երբեմն առկա են տեխնիկական թերություններ (թերի գրառումներ),** որոնց պատճառով **բուժհաստատությունները հրաժարվում են զորակոչիկներին ենթարկել բժշկական հետազոտությունների** և վերջիններս ստիպված են լինում վերադառնալ, նորից ուղեգիր ստանալ և կրկին գնալ Երևան:
- **Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները** և պիտանիության մասին որոշում կայացնելիս հանձնաժողովները հիմնվում են առկա այլ, ավելի թեթև արտահայտված առողջական խնդիրների վրա, որոնցով կայացված որոշումը չի համապատասխանում զորակոչիկի առողջական վիճակին:
- Պետության կողմից տրամադրվող **անվճար բուժօգնության շրջանակներում երբեմն առաջարկվում է առավել անարդյունավետ անվճար բուժում**:
- **Զորակոչիկներն ուղղորդվում են այն բուժհաստատություններ, որտեղ աշխատում է զորակոչի ընթացքում բժշկական հանձնաժողովի կազմում ընդգրկված համապատասխան բժիշկը:**
- Զորակոչիկներին **չեն տրամադրվում իրենց առողջական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ ակտերը և վերջնական եզրակացությունը**:
- Զորակոչիկի **սեփական նախաձեռնությամբ** իրականացված **հետազոտության արդյունքները հաշվի են առնվում ըստ հայեցողության:**
- **Որոշակի առողջական խնդիրների հիմքով տարկետում ստանալու դեպքում հաջորդ զորակոչին զորակոչիկների բուժզննություններն իրականացվում են թերի՝ միայն նշված առողջական խնդիրների կապակցությամբ և** չեն բացահայտվում նոր ի հայտ

եկած առողջական խնդիրները, որը հիմք կարող է հանդիսանալ հետագայում նրանց պիտանի ճանաչելու համար:

- **Զորակոչիկների** առողջական վիճակի հետազոտության **փաստաթղթերը չեն արտացոլում վերջիններիս իրական առողջական վիճակը**:
- Զորակոչիկների և վարժական հավաքների կանչվող պահեստազորում հաշվառված քաղաքացիների **ոչ բոլոր գանգատներն են արձանագրվում հանձնաժողովների կողմից**:
- **Պահեստազորում հաշվառված քաղաքացիները չեն ենթարկվում օրենքով սահմանված ծավալով բժշկական հետազոտությունների և փորձաքննության,** ավելին, քաղաքացիների ներկայացրած գանգատներին ի պատասխան **հորդորում են ներկայացնել սեփական միջոցներով իրականացրած բժշկական հետազոտությունների եզրակացությունները,** ինչը կարող է խնդրահարույց լինել հատկապես սոցիալապես անապահով անձանց համար:
- Հանձնաժողովներում **պահեստազորայինների նկատմամբ բժշկական հետազոտությունն իրականացվում է միայն բանավոր՝ հակիրճ հարց ու պատասխանի միջոցով:**
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումներում պահեստազորում հաշվառված անձանց տրամադրում են բուժզննությունների ներկայանալու վերաբերյալ կարգագիր, նրանց **հորդորում են հնարավորինս շուտ անցնել բժշկական հետազոտություններ՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ քաղաքացուն նախատեսում են ներգրավել վարժական հավաքներին շուրջ վեց ամիս անց, որի դեպքում առողջական վիճակում կարող է փոփոխություն տեղի ունենալ, հաստատես որոշ սեզոնային հիվանդությունների դեպքում:**

Կենտրանոկան բժշկական հանձնաժողովի հետ կապված

- Հաճախ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի **եզրակացությունը չի համապատասխանում զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներին:** Միևնույն առողջական խնդրի առկայությամբ երկու տարբեր զորակոչերին զորակոչիկները փորձաքննվում են միմյանցից էականորեն տարբերվող հոդվածներով՝ արդյունքում զինվորական ծառայության հետ անհամատեղելի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկը ճանաչվում է պիտանի զինվորական ծառայությանը:

- **Զորակոչիկը չի ուղեգրվում որակյալ և հետևաբար թանկարժեք բժշկական հետազոտության**, որի արդյունքում վերջինս ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, և միայն զորակոչիկի կողմից սեփական նախաձեռնությամբ հետազոտության արդյունքների հիման վրա ԿԲՀ-ն ստիպված լինում փոխել իր որոշումը՝ զորակոչիկին ճանաչելով ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

- Նախկինում բուժման նպատակով տարկետում ստացած **զորակոչիկներն առանց արդյունավետ բուժման հաջորդ զորակոչին ճանաչվում են պիտանի** կամ սահմանափակումով պիտանի զինծառայության համար:

- Բուժզննությունների արդյունքում **երկու տարբեր ախտորոշումների դեպքում զորակոչիկը չի ուղարկվում ստուգիչ բժշկական հետազոտության**, իսկ **երբեմն հաշվի չեն առնվում զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ անցած բուժզննությունների արդյունքները**, և առանց դրանք հաստատելու կամ ժխտելու, ԿԲՀ -ն կայացնում վերջնական որոշումը:

- **Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները,** իսկ բուժզննությունների արդյունքում արձանագրված հակասական տվյալների առկայության դեպքում ԿԲՀ-ն որոշում կայացնելիս հիմնվում է այն արդյունքների

վրա, ըստ որոնց զորակոչիկը համարվում է պիտանի զինվորական ծառայության համար:

ՀՀ առողջապահության նախարարության բուժհաստատությունների հետ կապված

- **Բուժհաստատությունները շարունակում են չտրամադրել զորակոչիկների առողջական վիճակի հետազոտման ակտերի** և բժշկական փորձաքննության արդյունքներով տրված **եզրակացությունների օրինակները**: 2022 թ. Կազմակերպության կողմից առաջարկվեց, որ անձի կողմից իր առողջական վիճակի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները բժշկական կազմակերպությունը պարտավոր է տրամադրել անվճար և գրավոր կարգով՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում (հիմք ընդունելով զորակոչի ժամկետային սահմանափակումը): Առաջարկությունն ընդունվեց ՀՀ ՊՆ կողմից որոշակի փոփոխությամբ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվեց, որ առողջական վիճակի վերաբերյալ տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով»: Այնուամենայնիվ, խնդիրը դեռևս լուծված չէ, քանի որ բժշկական հաստատությունները չունեն պարտավորություն 5-օրյա ժամկետում անձին տրամադրել իր առողջական վիճակի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

- Բուժհաստատությունները հետազոտություններ իրականացնելիս **ոչ միշտ են առաջնահերթությունը տալիս զորակոչիկներին**, արդյունքում՝ վերջիններս **ստիպված են լինում սպասել հերթի մեջ՝ քաղաքացիական անձանց հետ միասին**, չնայած այն հանգամանքին, որ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական

ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: Սույն մասում նշված դեպքերում **քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում է առաջնահերթ ու անվճար**՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում»:

- Որոշ մասնավոր բուժհաստատություններ շարունակում են տարբերակված մոտեցում ցուցաբերել **զորակոչային տարիքի անձանց նկատմամբ՝ հրաժարվելով նրանց ենթարկել բժշկական հետազոտությունների՝** հաշվի չառնելով այն հանգամանքը, որ անձը ներկայացել է հետազոտության սեփական նախաձեռնությամբ և իր ֆինանսական միջոցների հաշվին:

- **Ռազմաբժշկական հաստատություններում բուժզննություն անցնող պարտադիր ժամկետային զինծառայողները հաճախակի ենթարկվում են բուժաշխատողների կոպիտ ու արհամարհական վերաբերմունքին**: Վերջիններիս կողմից զինծառայողներին նշանակվում է դեղորայք, որի ոչ անվանումը և ոչ օգտագործման նշանակությունը զինծառայողներին չեն բացատրում՝ պատճառաբանելով, որ դա իրենց պետք չի, և հորդորում են ուղղակի ընդունել նշանակված դեղորայքը:

Կառավարության/ պաշտպանության նախարարության հետ կապված

- **Վարժական հավաքներից անձանց ազատելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները, որոնք, ըստ ՀՀ ՊՆ-ի գտնվում են շրջանառության և հաստատման փուլում, դեռևս չեն ընդունվել,** և ներկայումս վարժական հավաքների շարունակում են կանչվել անձինք, ում ընտանեկան պայմանները թույլ չեն տալիս նույնիսկ կարճ ժամկետով բացակայել ընտանիքից:
- Ներկայումս Կառավարությունը փորձում է կարգավորել վարժական հավաքների կանչվող քաղաքացիների ոչ միայն աշխատատեղի, այլ նաև աշխատավարձի

պահպանման հետ կապված հարցերը: Սակայն **հստակ չէ, թե ինչպես պետք է կարգավորվի անհատ ձեռներեց հանդիսացող պահեստազորում հաշվառված անձանց աշխատավարձի խնդիրը այն դեպքում, երբ վերջինս իր բացակայության ընթացքում եկամուտ չի ունենալու, ինչը հանգեցնելու է նրա և նրա ընտանիքի ֆինանսական վիճակի վատթարացմանը, հատկապես այն դեպքերում, երբ անձն ունի վարկային պարտավորություններ և շատ ավելի բարձր ամսական եկամուտ,** քան սահմանված է ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» որոշմամբ՝ որպես նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ:

- **Գերությունից վերադարձած զինծառայողը կրկին ներգրավվում է զինվորական ծառայության մեջ առողջական վիճակի համալիր հետազոտման և հոգեբանական արդյունավետ աջակցության տրամադրման և վերականագնման:**
- **Անհայտ կորած անձանց հարազատներին** հաճախ հայտնում են, որ **անձին անհայտ բացակայող ճանաչելու համար դատարան դիմելու դեպքում որոնողական աշխատանքներ չեն իրականացվի**, որի պատճառով ընտանիքները խուսափում են դիմել դատարան:
- **Միջգերատեսչական համագործակցությունը ոչ արդյունավետ է** այն դեպքերում, երբ, օրինակ, Կառավարության կողմից որոշում է ընդունվում վարժական հավաքներ հայտարարելու մասին, որը ուժի մեջ է մտնում հաջորդ օրը, իսկ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները քաղաքացիներին ծանուցում են արդեն իսկ հաջորդ օրը ներկայանալու եւ ծառայության վայր մեկնելու մասին՝ առանց հաշվի առնելու վարժական հավաքների ներկայանալու պարտավորության մասին օրենքով սահմանված 20-օրյա ժամկետը:

- Չնայած **«զինկոմիսարիատ» տերմինը փոխարինվել է «Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում» տերմինով,** այնուամենայնիվ որոշ իրավական ակտեր դեռևս չեն ենթարկվել անհրաժեշտ փոփոխությունների:

- ՀՀ պաշտպանության նախարարությունը դրսևորում է գաղտնիության բարձր մակարդակ, առանց որևէ հիմնավորում ներկայացնելու տեղեկությունների տրամադրման հարցում:

- Զորակոչիկների և պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների գործերով, երբ վերջիններս չեն համաձայնում զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումների, զինվորական ծառայության ընթացքում՝ զինվորական ծառայության հետ կապված ընդունվող որոշումների, գործողության կամ անգործության հետ, բողոքներ են ներկայացվում նաև ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: Գրեթե բոլոր գործերով իրավասու վարչական մարմինը մերժում է կազմակերպության կողմից բերված բողոքը՝ հիմնավոր համարելով ստորադաս վարչական մարմնի վարչարարության իրավաչափությունը: Ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատճաշ քննարկման առարկա չեն դառնում ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, որն էլ հիմք է հանդիսանում նշված որոշումը, գործողությունը կամ անգործությունը հետագայում դատական կարգով բողոքարկելու համար: ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը զորակոչի և զինվորական ծառայության ընթացքում ընդունվող որոշումների, գործողության կամ անգործության դեմ ներկայացված բողոքների ոչ պատշաճ քննության վերաբերյալ դրական փոփոխության չի ենթարկվել, չնայած այն հանգամանքին, որ նշված խնդրին Կազմակերպությունն անդրադառնում է սկսած 2016 թ.-ից:

ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոն ՊՈԱԿ-ի և քննչական մարմինների հետ կապված

- **ԴՆԹ նմուշառման համընկնման դեպքում անհայտ կորած անձանց՝ մահացածների համապատասխան ցուցակ տեղափոխելիս նրանց հարազատներին չի տրամադրվում դատաբժշկական փորձաքննության եզրակացության օրինակը**, ինչի հետևանքով վերջիններս չեն կարողանում դիմել զինծառայողների ապահովագրության հիմնդրամ՝ ֆինանսական աջակցությունից օգտվելու համար:
- Անհայտ կորած անձան հարազատներին ներկայացված մասունքները չեն համապատասխանում զինծառայողների կառուցվածքին:

Քննչական կոմիտեի/ կայազորային քննչական մարմինների հետ կապված

- Զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու մասին եզրակացությունների հետ չհամաձայնած և դրանք վերադաս մարմիններին և դատական ատյաններ բողոքարկող զորակոչիկների գործերով վարույթն իրականացնող մարմինը շարունակում է հաշվի չառնել և պատշաճ քննության առարկա չդարձնել զինվորական ծառայության մեկնելուց հրաժարվելու պատճառները և հիմնավորումները: Նշված հանգամանքը հաշվի չի առնվում նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում: Զորակոչիկների դեմ հարուցված քրեական գործերով քննչական մարմինները շարունակում են հանդես գալ որպես զորակոչ ապահովող մարմին:
- Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտում ռազմավարական դատավարությունների իրականացման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործերի վարույթը կասեցվում են՝ քրեական պատասխանատվության ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով: Վարույթն իրականացնող մարմնի որդեգրած այս անթույլատրելի պրակտիկան հանգեցնում

է մարդու հիմնարար իրավունքի խախտմանը: Քրեական գործի վարույթը կասեցնելու միջոցով վարույթն իրականացնող մարմինը՝ կիրառելով ազգային օրենսդրության նորմերը, արդյունավետ քննություն չի իրականացնում:

- Քրեական գործերը, հատկապես զինվորական ծառայության հետ կապված հանցագործությունների դեպքերով, քննվում են շատ երկար, չեն պահպանվում գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքները:

- Անհայտ կորած զինծառայողների գործով նախաքննություն իրականացնող մարմինը տուժողի իրավահաջորդներին անհիմն ու անհասկանալի պատճառներով գործի քննության ընթացքում երկար ժամանակ գործով դատավարական կարգավիճակ չի տալիս, մասնակից չի դարձնում իրականացվող քննությանը: Անհայտ կորած զինծառայողների հարազատները տուժողի իրավահաջորդի կարգավիճակ են ստանում և մասնակից են դառնում գործի վարույթին միայն կազմակերպության փաստաբանների ներգրավվելուց և համապատասխան միջնորդություններ ներկայացնելուց հետո:

ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների հետ կապված

- Դատարական գործերը չեն քննվում ողջամիտ ժամկետներում:

ՀՀ վարչական դատարանի հետ կապված

- Դատական գործերը դարձյալ չեն քննվում ողջամիտ ժամկետներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին.**

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

1.1 Բացառել զորակոչիկի առողջական վիճակի հետազոտության վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև ԿԲՀ որոշումների օրինակների տրամադրման մերժման դեպքերը:

1.2 Ապահովել բոլոր զորակոչիկների անձի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը, հատկապես՝ բժշկական հետազոտությունների իրականացման ընթացքում:

1.3 Բացառել զորակոչի ընթացքում բժշկական հետազոտություն անցնելու համար երկար ժամանակով սպասեցնելու արատավոր պրակտիկան և սահմանել օրվա ընթացքում առողջական վիճակի հետազոտություն անցնող զորակոչիկների առավելագույն թվաքանակը և ժամանակացույցը:

1.4 Վերանայել մարզերից Երևան առողջական վիճակի հետազոտության ուղեգրելիս զորակոչիկներին տրամադրվող տրանսպորտային ծախսերի համար նախատեսված գումարի չափը, որպեսզի վերջիններս կարողանան առավել սեղմ ժամկետներում հասնել բժշկական հաստատություններ, անցնել հետազոտությունները և նույն օրը հետ վերադառնալ:

Պահեստազորում հաշվառված անձինք

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

1.5 Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավանքների ներգրավելիս հաշվի առնել և պահպանել օրենքով սահմանված ժամկետները:

1.6 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին, տվյալ ժամանակահատվածում հայտարարված վարժական հավաքներին անձանց ներկայությունն ապահովելու նպատակով փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին:

Պահեստազորում հաշվառված անձինք/պարտադիր ժամկետային զինծառայողներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

1.7 Մարտական գործողություններին մասնակիցների զինվորական գրքույկներում պարտադիր կատարել համապատասխան նշում անկախ քաղաքացու՝ այդ մասին դիմելու հանգամանքից:

1.8 Բացառել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից անձանց զինվորական գրքույկները վերցնելու և առանց հիմնավոր պատճառի տևական ժամանակ հետ չվերադարձնելու պրակտիկան:

1.9 44-օրյա պատերազմին մասնակցած անձանց մարտական գործողություններին մասնակցի կարգավիճակ տրամադրել՝ կատարելով նշում զինվորական գրքույկում և բացառելով անձի վրա փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն դնելու ցանկացած պահանջ:

Գերությունից վերադարձած զինծառայողներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

1.10 Գերությունից վերադարձած զինծառայողների վերաբերյալ փաստաթղթերը տրամադրել վերջիններիս սեղմ ժամկետներում՝ առանց այդ մասին դիմումի ներկայացման:

2. Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովներին

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

2.1 Բժշկական փորձաքննություն իրականացնելիս ապահովել անձի առողջական վիճակի գաղտնիության իրավունքը:

2.2 Մի քանի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկի բժշկական հետազոտությունն իրականացնել բոլոր խնդիրներով և առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից և անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել առողջական խնդիրը:

2.3 Պիտանիության մասին որոշում կայացնելուց առաջ չանտեսել և ուշադրություն դարձնել զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրներին:

2.4 Պետության կողմից անվճար բուժօգնության շրջանակներում զորակոչիկներին առաջարկել և ուղեգրել միայն արդյունավետ և որակյալ բուժման:

2.5 Բացառել զորակոչիկի սեփական նախաձեռնությամբ իրականացված հետազոտության արդյունքները ըստ հայեցողության հաշվի առնելու պրակտիկան:

2.6 Զորակոչիկների առողջական վիճակի հետազոտության փաստաթղթերում արձանագրել վերջիններիս իրական առողջական վիճակը:

2.7 Բացառել զորակոչիկների կողմից ներկայացված գանգատները չարձանագրելու պրակտիկան: Անկախ այդ գանգատների հետագա հետազոտման արդյունքներից՝ դրանք պատշաճ արձանագրել անձի առողջական վիճակի հետազոտման ակտերում:

2.8 Զորակոչիկներին տրամադրված ուղեգրերը կազմելիս թույլ չտալ որևէ բացթողում, որը կարող է հանգեցնել բուժհաստատությունների կողմից զորակոչիկներին հետազոտության չենթարկելուն:

2.9 Հաշվի առնել սեզոնային հիվանդությունների բնույթը և առանձնահատկությունները, և միայն դրա հիման վրա կայացնել համապատասխան որոշում:

Պահեստազորում հաշվառված անձինք

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

2.10 Պահեստազորում հաշվառված անձանց՝ հայտարարված վարժական հավաքների կամ զորահավաքային զորակոչի շրջանակներում ներգրավելիս իրականացնել վերջիններիս պատշաճ, օբյեկտիվ բժշկական հետազոտությունն ու փորձաքննությունը՝ հաշվի առնելով նաև նրանց ներկայացրած գանգատներով համապատասխան ուղեգրեր տրամադրելու կարևորությունը:

3. Կենտրոնական բժշկական հանձնաժողովին

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

3.1 Տրամադրել հիմնավորված եզրակացություններ, եթե դրանք տարբերվում են զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներից:

3.2 Միմյանցից տարբերվող հիվանդությունների կամ հիվանդությունները սահմանող հոդվածների կիրառման դեպքում կայացնել հիմնավորված որոշում:

3.3 Ապահովել բոլոր անհրաժեշտ հետազոտությունների համար նախատեսված ուղեգիր՝ զորակոչիկի պիտանիության վերաբերյալ ճիշտ և իրական որոշում կայացնելու համար:

3.4 Հաշվի առնել առանձին հիվանդությունների «սեզոնային» բնույթը, և հետազոտություններն ու փորձաքննությունը կազմակերպել համապատասխան զորակոչի ընթացքում: Ի դեպ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովը

զորակոչիկներին կարող է տարկետում տրամադրել «մինչև մեկ տարի» ժամկետով, և հաշվի առնելով, որ նշված հիվանդությունն առավել արտահայտված է ցուրտ եղանակին, հիվանդության իրական պատկերը բացահայտելու համար ապահովել նման հիվանդությունների առկայության մասին բժշկական հետազոտությունը դրանց սրման ժամանակահատվածում:

3.5 Որոշում կայացնելիս հաշվի առնել զորակոչիկների սեփական միջոցներով անցած բուժզննությունների արդյունքները:

3.6 Բուժման նպատակով տարկետում ստանալուց հետո զորակոչիկներին ենթարկել արդյունավետ բուժման, որից հետո հաջորդ զորակոչին կայացնել պիտանության մասին որոշում:

4. ՀՀ առողջապահության նախարարության բժշկական հաստատություններին

Զորակոչիկներ/ պարտադիր ժամկետային զինծառայողներ/ պահեստազորում հաշվառված անձինք

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

4.1 Զորակոչիկներին և պահեստազորում հաշվառված անձանց ենթարկել համալիր հետազոտությունների՝ նրանց իրական առողջական վիճակը բացահայտելու համար: Միևնույն ժամանակ, դիմելու դեպքում տրամադրել նրանց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի օրինակները:

4.2 Պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում իրականացնել առաջնահերթ, արդյունավետ և որակյալ անվճար բժշկական միջոցառումներ, որոնք կապահովեն զորակոչիկների առողջական խնդիրների բացահայտման արդյունավետությունը:

4.3 Զորակոչիկների, պահեստազորում հաշվառված անձանց և զինծառայողների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք:

4.4 Զինծառայողներին հայտնել իրենց առողջական իրական վիճակի և նշանակվող բուժման մասին տեղեկություններ:

5. ՀՀ պաշտպանության նախարարությանը / ՀՀ արդարադատության նախարարությանը/ ՀՀ կառավարությանը/ ՀՀ ազգային ժողովին/ ՀՀ ԱԺ հանձնաժողովներին

Օրենսդրական առաջարկություններ

5.1 «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և հարակից բոլոր իրավական ակտերում համապատասխանեցնել հասկացությունների անվանումները, մասնավորապես՝ «զինկոմիսարիատ» անվանումը փոխարինել «զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում» անվանմամբ:

5.2 Առանձին սահմանել զորահավաքային զորակոչի իրականացման կարգը, ինչպես, օրինակ, սահմանված է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի դեպքում:

Զորակոչիկներ/զինծառայողներ

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելիս սահմանել միաժամանակ երկու և ավելի հիվանդությունների առկայության դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը, և հրաժարվել ըստ առանձին հիվանդությունների գնահատման հիման վրա զորակոչիկների պիտանիության մասին որոշում կայացնելու մոտեցումից՝ վերացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ միաժամանակ հինգ հիվանդության առկայությամբ տարկետում սահմանելու դրույթը:

5.4 Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ

ժամկետներ կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության՝ ելնելով հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ ժամանակից:

5.5 Պիտանիության աստիճանը որոշող դրույթները սահմանելիս հաշվի առնել անձի առողջական խնդիրների ծանրության աստիճանը:

5.6 Լրացում կատարել «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հոկտեմբերի 2018 թ. N 1132-Ն որոշման հավելված N 1-ի 37-րդկետում՝ նախատեսելով, որ այն դեպքում, երբ զորակոչիկը վիճարկում է իրեն պարտադիր զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումը, ապա զորակոչի ավարտից հետո համապատասխան կայազորային քննչական բաժին քրեական գործ հարուցելու միջնորդություն ներկայացվում է միայն վիճարկման արդյունքում ընդունված վերջնական փաստաթղթի (դատականակտ, վարչական մարմնի որոշում և այլ) անբողոքարկելի դառնալուց հետո:

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

5.7 Ապահովել միջգերատեսչական արդյունավետ համագործակցությունը ՀՀ կառավարության, ՀՀ պաշտպանության նախարարության, զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության և այլ մարմինների հետ:

5.8 Կազմակերպության գրավոր դիմումներին և հարցումներին տրամադրել պատասխաններ օրենքով սահմանված ժամկետներում և անդրադառնալ դրանցում բարձրաձայնված խնդիրներին:

5.9 Իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումների, գործողության կամ անգործության դեմ բերված բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատշաճ քննարկման առարկա դարձնել բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքի քննարկման արդյունքներով ընդունել փաստարկված և պատճառաբանված որոշում:

Գերությունից վերադարձած զինծառայողներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

5.10 Գերությունից վերադարձած զինծառայողներին կրկին ծառայության մեջ ներգրավելուց առաջ ապահովել վերջիններիս արդյունավետ բուժօգնության տրամադրումը և ֆիզիկական ու հոգեբանական ամբողջական վերականգնումը:

Անհայտ կորած անձինք

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

5.11 Արգելել իրավասու մարմինների աշխատակիցներին ապատեղեկատվություն տարածել անհայտ կորած անձանց հարազատների շրջանում իբր անձանց անհայտ բացակայող ճանաչելու դեպքում նրանց որոնողական աշխատանքները դադարեցվում են:

6. ՀՀ արդարադատության նախարարությանը

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիկրնեի վերաբերյալ առաջարկություններ

6.1 Պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը, ինչպես օրինակ՝ սահմանված է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով:

7. Քննչական կոմիտեին/ վարույթ իրականացնող մարմիններին

Անհայտ կորած անձինք

Գործնականում առկա խնդիկրնեի վերաբերյալ առաջարկություններ

7.1 ԴՆԹ նմուշառման համընկնման դեպքում անհայտ կորած անձանց հարազատներին տրամադրել դատաբժշկական փորձաքննության եզրակացության օրինակը, որի միջոցով վերջիններս կկարողանան դիմել զինծառայողների ապահովագրության հիմնդրամ՝ ֆինանսական աջակցությունից օգտվելու համար:

8. ՀՀ քննչական կոմիտեին (զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններ), քրեական գործեր քննող ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություն

8.1 Հաշվի առնել, որ անձը, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով երաշխավորված հիմնարար իրավունքներից, փորձելով պարզել վարչական մարմնի կողմից դրսևորած վարչարարության իրավաչափությունը՝ վիճարկում է իրեն պարտադիր զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումը և անձի արարքին քրեաիրավական գնահատական տալ միայն վարչական ակտի, գործողության կամ անգործության վիճարկման արդյունքում ընդունված վերջնական փաստաթղթի (դատական ակտ, վարչական մարմնի որոշում և այլ) անբողոքարկելի դառնալուց հետո:

9. ՀՀ քննչական կոմիտեին (զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններ)

Զորակոչիկներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

9.1 Նախաքննության ընթացքում դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն:

9.2 Նախաքննության ընթացքում հայտարարված հերթական զորակոչի ընթացքում զորակոչիկի անձնական գործը չուղարկել և զորակոչիկին չհորդորել ներկայանալ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում՝ զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի լինելու մասին հարցը կրկին պարզելու և այդ հանգամանքով պայմանավորված չձգձգել նախաքննության ընթացքը:

Մահացած/ անհայտ կորած զինծառայողներ

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

1. Հիմնարար իրավունքների և ազատությունների խախտումների շուրջ իրականացվող քննության շրջանակներում խստագույնս պահպանել քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետները:

Հավելված 1

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2022-07.10/447
07.10.2022 թ.

ՀՀ առողջապահության նախարար
Անահիտ Ավանեսյանին

Հարգելի տիկին նախարար,

2022 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունը կայացրել է «Վարժական հավաքներ հայտարարելու եւ դրա ապահովման համար ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցները ներգրավելու մասին» թիվ 1484-Ն որոշումը: Որոշման հրապարակումից և վարժական հավաքներում պահեստազորում հաշվառված անձանց ներգրավելու գործընթացն սկսելուց հետո Կազմակերպությունը վարժական հավաքների կանչված անձանցից ահազանգեր է ստանում այն մասին, որ ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ տարածքային ստորաբաժանումները չեն ապահովում օրենքով սահմանված բժշկական հետազոտումը եւ փորձաքննությունը՝ պատճառաբանելով, որ պետության կողմից երաշխավորած անվճար բժշկական օգնության և սպասարկման սահմանված քանակը սպառված է:

Հարկ է նշել, որ ՀՀ **Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ վարժական հավաքների կանչված քաղաքացու, առողջության պահպանման իրավունքը:**

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է. «1. Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և **վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:** Սույն մասում նշված դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում է **առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում**»:

Բացի այդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով ՀՀ Կառավարությունը 18.10.2018 թ-ին կայացված «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կարգը սահմանելու մասին» թիվ 1174-ն որոշմամբ սահմանում է.

13. Այն պահեստազորայինները, որոնք ընտրվել են որպես վարժական հավաքներում պատրաստվելու թեկնածուներ, ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ՝ **զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով**:

14. Ծանուցման հիման վրա **զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստազորայինն անցնում է բուժհետազոտում**, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման զորամաս՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով:

ՀՀ կառավարության թիվ 405 որոշման 15-րդ եւ 18-րդ կետերի համաձայն՝ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի եւ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովի գործառույթներից է. 1) զինապարտներին զինվորական հաշվառման, զորակոչի, **վարժական հավաքների**, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ փորձաքննության ենթարկելը: Նույն որոշման 49-րդ կետը սահմանում է. 49. Պահեստազորում հաշվառված զինապարտների բժշկական փորձաքննությունը տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ իրականացնում են զինկոմիսարիատների կամ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովները՝

1) հաշվառման նպատակներով.

2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս.

3) վարժական հավաքների կանչելիս.

4) պահեստազորում հաշվառված զինապարտի՝ իր առողջական վիճակի փոփոխության վերաբերյալ տվյալներ ներկայացնելու դեպքերում:

Մեջբերված իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ **վարժական հավաքներին ներգրավելուց առաջ պետությունը նախ և առաջ պարտավոր է հարգել անձի առողջության պահպանման իրավունքը և ձեռնպահ մնալ անձի առողջության**

պահպանման իրավունքի խախտումներից, իսկ բժշկական փորձաքննությունն իրականացնող մարմինները պարտավոր են նախքան վարժական հավաքների համար պիտանիության մասին որոշում կայացնելն իրականացնել քաղաքացու առողջական վիճակի անհրաժեշտ և ամբողջական հետազոտություն, այնուհետև միայն որոշում ընդունել վարժական հավաքին ներգրավելու մասին: Հետևաբար, վարժական հավաքների կանչված անձանց բժշկական հետազոտումը չի կարող չիրականացվել միայն այն պատճառով, որ պետության կողմից երաշխավորած անվճար բժշկական օգնության և սպասարկման սահմանված քանակը սպառված է: Նման իրողությունը հակասում է և չի բխում վերը նշված իրավանորմերի պահանջներից, խախտում է վարժական հավաքների կանչված անձանց առողջության պահպանման իրավունքը և կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ նման պայմաններում վարժական հավաքների կարող են ներգրավել այնպիսի անձինք, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս վերջիններիս մասնակցել վարժական հավաքների: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքին, որ արդեն իսկ արձանագրվել է վարժական հավաքի վայր մեկնած պահեստազորայինի մահվան դեպք, երբ 2022 թվականի օգոստոսի 4-ին:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ դիմում եմ Ձեզ՝ վարժական հավաքներին մասնակցելու համար ընտրված պահեստազորայինների բժշկական հետազոտումը և փորձաքննությունը օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու պահանջով:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Սադիկյան
Էլ-փոստ՝ asadikyan@hcav.am
Հեռ.՝ 0322 4 22 68

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____N_____
Ձեր N_____

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան առողջապահության նախարարին ուղղված Ձեր 2022 թվականի հոկտեմբերի 7-ի Ե/2022-07.10/447 գրության տեղեկացնում եմ, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվող առողջական վիճակի հետազոտությունները և բժշկական փորձաքննությունները ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշմամբ սահմանված հերթագրման եղանակով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկում, և ենթակա են արտահերթ սպասարկման՝ անկախ այդ ծառայությունների դիմաց փոխհատուցումը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից:

Միաժամանակ առաջարկում եմ առողջապահության նախարարություն ներկայացնել այն բժշկական կազմակերպությունների ցանկը, որոնք գրությամբ նշված հիմքերով չեն իրականացնում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվող առողջական վիճակի հետազոտությունները և բժշկական փորձաքննությունները:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Ավետիսյան
ՀՀ ԱՆ ՊԱԳ Հեռ. 060 80-80-02 (4016)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

№ ԿՄ/432
«10» 04 2023թ.

Հասցեն՝ ք. Երևան, Բաբայան 6
Էլ. հասցեն՝ hhzk@mil.am
Հեռ. (010) 20-15-68

Կատ. մուտք Դ/432

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Էլ.հասցե՝ nmovsesyan@hcav.am
Պատճենը՝ ՀՀ ՊՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Ս.ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաքունց.

ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետին հասցեագրված Ձեր դիմումը՝ կապված [redacted] մարզի [redacted] համայնքի բնակիչ [redacted] վարժական հավաքներին չներգրավելու վերաբերյալ հարցը ուսումնասիրվել է ՀՀ ՊՆ Զ և ԶՀ ծառայությունում:

Ուսումնասիրության արդյունքում հայտնում եմ, որ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին՝ վարժական հավաքների կամ զինվորական վարժանքների և զորավարժությունների կանչելու կարգն ու ժամկետները սահմանված են <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 58-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 18.10.2018թ. թիվ 1174-Ն որոշմամբ:

Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներից ազատվելու հիմքերը կարգավորված է <<Պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով, որով այլ որևէ հիմք նախատեսված չէ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին չկանչվելու և վարժական հավաքներից ազատելու համար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ընտանեկան կարգավիճակի հանգամանքների հետ կապված վարժական հավաքներից ազատվելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ներկայումս <<Պաշտպանության մասին>> ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 18.10.2018թ. թիվ 1174-Ն որոշման մեջ կատարվել է փոփոխություններ և լրացումներ, որը գտնվում է շրջանառության և հաստատման փուլում՝ հաստատվելուց հետո այն կկիրառվի:

Երկրորդ հասցեատիրոջը՝ ի գիտություն:

Հարգանքով՝
ՊԵՏ,
գնդապետ Ա. ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ

Կատ. փ/գ-տ Մեհրաբյան
10.04.2023թ.